ԱՐՑԱԽԻ ԲՈԼՈՐ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ԻՄԸ

«Ճամփորդի» գլխավոր խմբագիր Արիանա Կառիլիի հարցազրույցը՝ ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՆ Է

- Պարոն Մխոյան, ԼՂՀ վարչապետը համարում է, որ գյուղատնտեսությունը երկրի էկոնոմիկայի ոչ միայն այսօրվա, այլև վաղվա լոկոմոտիվն է: Ի՞նչ գլխավոր ուղղություններով է զարգանում կարևորագույն այս ոլորտը:

- Սկսեմ նրանից, որ գյուղատնտեսության առաջատար դերը նորանկախ ԼՂՀ-ում պատահական չէր: Պատերազմից, տնտեսական համակարգի լիակատար փլուզումից, ինտեգրացիոն նախկին կապերի վերացումից հետո, միակ բանը, որ մնաց աշխատավոր արցախցուն՝ հողն էր: Անգամ նորելուկ կապիտալիզմի ձևավորման համար էլ միակ դաշտը հողն էր, գյուղվերամշակող արտադրությունը, որովհետև այլ ռեալ բան չկար:

Սակայն ցանկացած մարդ, որելի է ասել, ամբողջ աշխարհն է՝ մեզ համար:

Հացահատիկն, օրինակ, Հայաստանը գնում է սեփական կարիքների համար, և դեռ հետո ներմուծում էլ է այլ երկրներից: Սակայն հացահատիկ արտադրելը տնտեսապես ձեռնտու չէ մեզ համար: Նոր բուսատեսակները ավելի մեծ տնտեսական էֆեկտ են տալիս: Հնարավոր է դառնում մեկ հեկտարից ոչ թե մի քանի հարյուր հազարի, այլ մի քանի միլիոնի եկամուտ ստանալ: Այդ նպատակին են ուղղված նաև պտղաբուծության նոր ծրագրերը, որոնց համար, Հայաստանին զուգահեռ, լավ շուկա է նաև Ռուսաստանը: Մասնավորապես՝ մոտ 1000 հա նռան նոր այգիներ կան, որոնց բերքին արդեն սպասում են ռուսական առևտրային ցանցերը, և դա անհատակ շուկա է:

ՆՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ

- Մարդկային կապիտալ – տեխնոլոգիաներ – ֆինանսներ բուրգը իմ մասնագիտական հետաքրքրությունների ասպարեզում է: ՀՀ նախագահը անընդմեջ քայլեր է ձեռնարկում գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար: Դրա մեջ մտնում են նաև ձկնաբուծության զարգացմանն ուղղված միջոցառումները: Գրեթե բոլոր նմանատիպ ծրագրերում, որ ես մասնակցություն եմ ունեցել, նկատել եմ կարևորագույն հարցեր, որոնք առաջացել են հատկապես ֆինանսավորման, տեխնոլոգիաների, մարդկային կապիտալի հարցերում: Ինչպե՞ս է Արցախը լուծումներ գտնում նման հարցերին օպտիմալ պատասխան տալու համար:

- Ինչպես ամենուրեք այնպես էլ Արցախի գյուղատնտեսությունում ֆինանսական խնդիրներ, միջոցների դեֆիցիտ միշտ կա: Միևնույն ժամանակ՝ կարող եմ ասել, որ ի տարբերություն մեզ՝ պետությանը, արցախցի գյուղացին այս հարցում խնդիրներ չունի, մենք լուծում ենք այդ խնդիրները: Հաշվի առնելով մեր պետության, ժողովրդի առանձնահատուկ վիճակը, շատ ենք աջակցում, հաճախ՝ նվիրում ենք գյուղացուն այն ամենն ինչն անհրաժեշտ է: Այս տարի էլ, ահա՝ բոլոր սերմերը նվիրել ենք. եգիպտացորենը, արևածաղիկը, սոյան, հնդկացորենը… Ղարաբաղում աճեցվող բոլոր բույսերի սերմերը նվիրել ենք գյուղացուն: Նվիրել ենք նաև բոլոր տեսակի պարարտանյութերը:

Ղարաբաղի պետությունը բոլորովին էլ հարուստ չի: Այդուամենայնիվ, մենք համարում ենք, որ ամենասուղ միջոցներից անգամ առաջնային ծախսը գյուղօգնությունը պիտի լինի, որովհետև վաղը մեզ պահողը հենց գյուղացին է: Այսօր նվիրում ենք և վստահ ենք, որ առաջիկայում ինքն իր ստացած եկամուտով կգնի այդ սերմերը, պարարտանյութը:

Ունենք նաև ցածր տոկոսով վարկեր. 5 - 6 տարի մարման ժամկետով վարկը տրամադրում ենք՝ սուբսիդավորելով տոկոսների մեծ մասը: 16 %-անոց վարկը գյուղացին 6%-ով է վերցնում:

Տեխնոլոգիաների վերաբերյալ կասեմ հետևյալը. ես ինքս գյուղատնտեսության մասնագետ եմ: Լավ գիտեմ թե՛ Արցախը, թե՛ Արցախի համար՝ աշխարհում եղած կարևորը: Անձամբ մասնակցում եմ լավագույն սերմերի ու պտղատեսակների, պարարտանյութերի ընտրությանը: Գյուղացուն սովորեցնում եմ կիրառել ոռոգման նորագույն տեխնոլոգիաները: Իմիջիայլոց՝ դրանք էլ հատկացվում են պետական աջակցությամբ:

Այ, աշխատանքը մարդկային կապիտալի հետ՝ հաճախ ավելի ժամանակատար է: Սովորաբար գյուղացին ավանդապահ է ու թերահավատ. նա էլ բժշկի ու մանկավարժի պես՝ դժկամությամբ է ընդունում փոփոխությունները, առաջնորդվում է «մի վնասիր» սկզբունքով: Չէ՞ որ բերքից է կախված իր ընտանիքի կյանքը: Բայց երբ կամաց – կամաց, սկզբում՝ մի հեկտարի վրա, համոզվում է ասածիդ ճշմարտացիությանը, այլևս երբեք չի համաձայնում վերադառնալ անորակ հնին: Իսկ այդ հաջողության համար խիստ կարևոր է, որ ամեն ինչ ճիշտ արվի. լավագույն պարարտանյութի սխալ տեղադրումն, օրինակ, բառիս բուն իմաստով՝ ջուրն է գցում կատարված աշխատանքն էլ, իր ու սերմի «պատիվն» էլ:

Այս պատճառով է, որ ես օր ու գիշեր դաշտերում եմ: Կարող եմ ասել. հասել եմ նրան, որ Արցախում ամեն ինչ վերահսկելի է: Ես ամեն մի խոշոր հողագործի անուն առ անուն, դաշտի տեղերով գիտեմ: Շատ անգամ դաշտի կողքով անցնելիս կանգնում, դիտողություն եմ անում և հետևում եմ, որ աչքիս առաջ սկսեն ճիշտն անել:

ԱՐՏԱԳԱՂԹԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ՝ ԳՆԱԼ ԱՐՑԱԽ

- Իսկ անձնական հողերի վրա ի՞նչ հաջողություններ եք գրանցել (ժպտում է)**:**

- Երբ նոր էի եկել Արցախ, ընկերներիցս շատերն էին ինձ հորդորում հոխում ամեն ինչ վերահսկելի է: Ես ամեն մի խոշոր հողագործի անուն առ անուն, դաշտի տեղերով գիտեմ: Շատ անգամ դաշտի կողքով անցնելիս կանգնում, դիտողություն եմ անում և հետևում եմ, որ աչքիս առաջ սկսեն ճիշտն անել:

ղագործությամբ զբաղվել: Ես կտրականապես հրաժարվել եմ դրանից: Համարում եմ, որ Ղարաբաղի բոլոր հողերը, ամբողջ գյուղատնտեսությունն էլ իմն են: Եվ եթե ես անձնականով զբաղվեմ, հաստատ արդար չեմ լինի ուրիշների հանդեպ:

- Ի՞նչ է արվում, հայ ընտանիքներին, հայ հողագործներին շահագրգռելու և արտագաղթելու փոխարեն՝ Արցախ բնակության բերելու համար:

- Նախ՝ պետությունն այստեղ իրոք գյուղացու կողքին է: Միշտ չէ որ կարողանում ենք շատ գումար տալ գյուղացուն: Եվ դա պետք էլ չէ: Ես կողմնակից եմ 100 հազար դրամի փոխարեն 200 հազարի ապրանք տալուն՝ սերմնացու, պարատանյութեր, գիտելիքներ:

Ի տարբերություն Հայաստանի՝ մենք ունենք մեծ հողային ռեսուրսներ: Հայաստանում մեծ հողակտոր է համարվում 1 հեկտարը: Մենք կարող ենք տալ 10, 100 հեկտար: Եվ բոլորը՝ որակյալ հողեր: Հայաստանում չեն տրամադրի այն որակյալ սերմերն ու պարարտանյութը, որը մենք ենք տրամադրում, կաթիլային ոռոգման համակարգերը, անվճար արտեզյան հորերը: Վերջապես՝ տրամադրում ենք խորհրդատվություն:

Առաջին ֆերմերը, ում հետ սկսել եմ աշխատել, 100 հեկտար հողի վրա միայն ցորեն էր աճեցնում: Այդ ֆերմերն այսօր 2 հազար հեկտար ունի ու եվրոպական չափանիշներին համապատասխան գյուղատնտեսությամբ է զբաղվում: Նա այսօր 10 տեսակի մշակաբույսեր ունի ցանած: Ստանում է ռեկորդային բերք. նախկին 1-2 տոննայի փոխարեն այժմ հեկտարից ստանում է 8-10 տոննա: Նա արդեն ունի վերամշակման սեփական փոքրիկ գործարան և հիմնականում զբաղվում է ձեթի արտադրությամբ:

Այդ ֆերմերի օրինակով ես բոլորին կարողացա շահագրգռել, ապացուցել, որ հնարավոր է: Նման ֆերմերներ ես հիմա շատ ունեմ: 500, 600, 1000 հեկտարը սովորական թվեր են դարձել: Զուգահեռաբար օգնում, զորացնում ենք և փոքրերին. այժմ 50-50 է խոշոր և միջին ու փոքր հողագործների հարաբերակցությունը:

Ճիշտ է՝ ապահովագրություն չունենք, բայց երբ խնդիր է ունենում գյուղացին՝ մենք զիջում ենք նրա պարտքերը: Դեռևս 5-6 տարի առաջ մենք տարեկան մինչև 10.000 հա մշակելի հողատարածքներ կորցնում էինք կարկուտից: Պետությունը տեղադրեց հակակարկտային համակարգեր, և շատ փոքր ծախսերով մենք կարողացանք կարկուտի խնդիրը լուծել: 250-300 միլիոնով լուծեցինք տարեկան մոտ 3 միլիարդի վնասը: Վատ ապահովագրություն չէ, համամիտ ե՞ք:

- Ըստ էության՝ այո: Սակայն հիմա խոսենք մի ուրիշ բանից. Դուք այստեղ Երևանից եք տեղափոխվել: Ինչու՞ նման որոշում կայացրիք:

- Արցախի հետ ինձ դեռևս ազատագրական պատերազմն է կապում: Երբ տեղափոխվում էի այստեղ աշխատանքի, ընտանիքիս համոզեցի որ մեկ տարով եմ գնում: Եվ ամեն տարի խոստանում եմ, որ այն վերջինն է լինելու: Երեկ եմ վերադարձել Երևանից. ապրիլ ամսվա ընթացքում ընդամենը 2 օր կարողացա լինել տանը: Եվ քանի որ ծմեռային հագուստս տարել էի հետս, ասացի՝ տեսնու՞մ եք, բերել եմ, ուրեմն սա վերջին տարին է **(ծիծաղում է)**: Կատակ էր, իհարկե:

Իմ կարծիքով՝ յուրաքանչյուր հայ իր հնարավորությունների չափով պետք է օգտակար լինի իր Հայրենիքին, որի մի անբաժան մասն է Արցախը: Ձինվորը կծառայի 2 տարի, ես կմնամ, որքան պետք լինեմ և որտեղ պետք լինեմ. կաբինետում կամ խրամատում, տարբերություն չկա: Երբ Արցախ եկա, երիտասարդ, սևահեր մարդ էի, հիմա ճերմակել եմ, երեխաներս դպրոցականներ էին, հիմա՝ համալսարան են ավարտում: Այնպես որ, փառք Աստծո, ամեն ինչ լավ է: